# ՄՏԱՎՈՐ ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

**Հ. Ռ. Մկրտչյան**

Երևանի <<Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն>> ՊՈԱԿ-ի տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

**Գ. Հ. Բալասանյան**

Նոր Խարբերդի մասնագիտացված մանկատան հատուկ մանկավարժ

**Հանգուցային բառեր և արտահայտություններ**. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա, ինքնասպասարկման կարողությունների և հմտությունների զարգացում և ձևավորում, մանկավարժական մոտեցումների արդյունավետ ուղիներ, շտկողական պարապմունքներ, զարգացնող ուսուցման տեսություն:

Կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաներին, այդ թվում՝ մտավոր խանգարումներ ունեցող երեխաներին ինքնուրույն կյանքի, աշխատանքային գործունեության և հասարակության մեջ ներառելուն նախապատրաստման խնդիրը հատուկ մանկավարժության և հոգեբանության մեջ միշտ եղել է արդիական: Այստեղ առանձնահատուկ նշանակություն ունի մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ինքնասպասարկման, տարրական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորումը:

Նշված խնդրի նշանակությունն ավելի է մեծանում, երբ փաստվում է, որ հատուկ դպրոցների շրջանավարտների մեծամասնությունը պատրաստ չէ ինքնուրույն կյանքին,շատերը չեն կարող իրենց սպասարկել և կախվածություն ունեն ուրիշներից: Մյուս կողմից երեխաների հոգեֆիզիկական թերզարգացումը, ճանաչողական, շարժողական և այլ ոլորտների ոչ բավարար զարգացումը, սոցիալ-կենցաղային պատրաստվածության փորձի բացակայությունը զգալիորեն դժվարեցնում են մտավոր հետամնաց երեխաների ինքնասպասարկման հմտությունների և կարողությունների զարգացման ուղղությամբ իրականացվող մանկավարժական աշխատանքների կազմակերպումը:

Այդ իսկ պատճառով մտավոր խանգարումներ ունեցող երեխաների ինքնասպասարկման հմտությունների և կարողությունների ձևավորման մանկավարժական մոտեցումների արդյունավետ ուղիների ուսումնասիրությունը և այդ ուղղությամբ փորձարարական աշխատանքները լուծում են արդիական, գործնական և սոցիալական կարևոր նշանակություն ունեցող նշված խնդիրները:

Վերը նշվածը դարձավ մեր աշխատանքի ուղղվածությունը, որի հիմնական խնդիրներն են՝ ուսումնասիրել

հատուկ /օժանդակ/ դպրոցի սովորողների ինքնասպասարկման կարողությունների և հմտությունների զարգացման մակարդակը, ինչպես նաև տվյալ երեխաների համար մշակել միջոցներ, մեթոդներ և պայմաններ, որոնք կզարգացնեն և կկատարելագործեն նրանց ինքնասպասարկման կենսական անհրաժեշտ հմտությունները:

Մեր առջև դրված խնդիրների լուծման համար պլանավորում ենք կիրառել հետազոտության հետևյալ մեթոդները.

1. Հետազոտական խնդրի շուրջ գիտամեթոդական գրականության ուսումնասիրություն, վերլուծություն և ընդհանրացում:

2. Փորձարկմանը մասնակից երեխաների բժշկական փաստաթղթերի ուսումնասիրում:

3. Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ինքնասպասարկման կարողությունների և հմտությունների զարգացման և ձևավորման ուղղությամբ առկա առաջավոր փորձի ուսումնասիրություն:

4. Մանկավարժական և սոցիոլոգիական հետազոտության մեթոդներ՝ դիտարկում, զրույց, հարցում, անկետավորում:

5. Ստուգողական փորձեր, թեստավորում:

6. Մանկավարժական գիտափորձ (հաստատող և ձևավորող):

7. Մաթեմատիկական վիճակագրական մեթոդներ:

Անցկացվող հետազոտության համար մեթոդական հիմք են հանդիսացել ընդհանուր մանկավարժության և հոգեբանության սկզբունքները: Դա ամենից առաջ անձի զարգացման և ձևավորման մեջ գործունեության առաջատար դերն է [А. Н. Леонтьев, 1997] գործողությունների և հասկացությունների փուլային ձևավորման տեսությունը [П. Я. Гальперин, 1966], զարգացնող ուսուցման տեսությունը [В. В. Давыдов, 1966], մտավոր հետամնաց երեխաների ուսուցման, դաստիարակության և զարգացման տեսական հիմքերը [1, 3], ինչպես նաև փոխհատուցման տեսությունը [Л. С. Выготский, 1983]:

Հետազոտության կազմակերպումը և անցկացումը պետք է իրականացվի հետևյալ հերթականությամբ.

1. Տվյալ խնդրի ուսումնասիրվածության և մշակվածության աստիճանների որոշում:

2. Աշխատանքների փուլերի պլանավորում, առաջադրանքների ճշտում, հետազոտության մեթոդների ընտրություն:

3. Փորձարկվող համակազմի ընտրություն և համալրում, անցկացվող աշխատանքների առաջադրանքների հետ ծանոթացում

4. Ինքնասպասարկման կարողությունների և հմտությունների ձևավորման զարգացման ուղղությամբ իրականացվող շտկողազարգացնող պարապմունքների հիմնական բովանդակության և ձևերի որոշում:

5. Դպրոցական ուսուցման պայմաններում մտավոր հետամնացություն ունեցող դպրոցականների ինքնասպասարկման տարրական կարողությունների, ուսուցման մեթոդների և միջոցների ընտրում, մշակում, համակարգում:

6. Հետազոտության առջև դրված խնդիրների, երաշխավորված մոտեցումների փորձարարական ճանապարհով կիրառում:

Մենք ձգտել ենք, որ մանկավարժական գիտափորձի հիմնական նյութը, որին պետք է տիրապետի մտավոր հետամնացություն ունեցող

դպրոցականը, համապատասխանի այս երեխաների մտավոր և հոգեֆիզիկական հնարավորություններին: Ամբողջ նյութը մեր կողմից պայմանականորեն բաժանված էր ըստ տեսական գիտելիքների, գործնական կարողությունների և հմտությունների: Ծրագրի «Ինքնասպասարկում» բաժնում մենք առանձնացրել ենք այնպիսի ենթաբաժիններ, ինչպիսիք են, օրինակ կենցաղային հմտությունները և կարողությունները /կարգի բերել սենյակը, լվանալ հատակը, իրերը դնել իրենց տեղերում, դրանք դասավորել և այլն/, ինքնասպասարկման հիգիենիկ հմտությունները /լվացվել, ատամները մաքրել, զուգարանից օգտվել, հետևել արտաքին տեսքին և այլն/, ինքնասպասարկումը սեղանի շուրջ /սպասքադրում, սպասքի լվացում և այլն/, ինքնասպասարկում կենցաղային տեխնիկայով /սպիտակեղենի արդուկում, լվացքի մեքենայի, փոշեկուլի, տաքացնող սարքերի օգտագործում և այլն/:

Ուսուցանող մանկավարժական գիտափորձն այնպես պետք է կառուցված լինի, որ աշխատանքի յուրաքանչյուր փուլի վերջում փորձարկվողները կարողանան տիրապետել ինքնասպասարկման տեսական գիտելիքներին և զարգացնեն իրենց գործնական կարողություններն ու հմտությունները: Դա թույլ կտա մեզ որոշելու նրանց գիտելիքների, կարողությունների և հմտությունների այն ծավալը, որին սովորողները պետք է տիրապետեն յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում:

Ինքնասպասարկման կարողությունների և հմտությունների զարգացման, ձևավորման և կատարելագործման ուղղությամբ կազմակերպվող շտկողական պարապմունքների ժամանակ ուսուցողական, մանկավարժական գիտափորձի տարբեր փուլերում մենք լայնորեն կիրառել ենք հատուկ միջոցներ /վարժություններ, առաջադրանքներ և խաղեր/ և մեթոդական հնարներ, որոնք ապահովում են սովորողների ճանաչողական, խաղային, ուսումնական աշխատանքային և շարժողական ակտիվությունը:

Պարապմունքների բովանդակությունը որոշելիս հաշվի ենք առել այս երեխաների առօրյան: Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ինքնասպասարկման կարողությունների ձևավորման համակարգում կարևոր տեղ ենք հատկացրել իրադրային գործնական վիճակների մոդելավորմանը, որտեղ փորձարկվողները կկարողանան ստուգել իրենց ձեռք բերած գիտելիքները, կարողությունները և հմտությունները: Ինքնասպասարկման մեջ գործնական իրավիճակի այդպիսի մոդելավորումը կզարգացնի այս երեխաների հետաքրքրությունները և ակտիվությունը, ինչպես նաև կնպաստի կենսական կարևոր կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը:

Այսպիսով, ուսումնական մանկավարժական գիտափորձի կազմակերպման և անցկացման շտկողզարգացնող պարապմունքները վերաբերում են մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ինքնասպասարկման հմտությունների և կարողությունների ձևավորմանը և դրանց զարգացման ուղղությամբ տարվող մանկավարժական մոտեցումների կատարելագործմանը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Власова Т. А. Певзнер М. С. Дети с отклонениями в развитии М. 1973.
2. Выготский Л. С. Основы дефектологии, Собр. Соч в 6т М 1983 т .5.
3. Петрова В. А. Психология умственно отсталого школьника М. 1996.
4. Обучение детей с нарушениями интелектуального развития Под ред Б. П. Пузанова М. Издательский центр “Академия” 2003.


## РЕЗЮМЕ

## ИССЛЕДОВАТЕЛЬСКАЯ НАПРАВЛЕННОСТЬ РАБОТ ПО РАЗВИТИЮ НАВЫКОВ САМООБСЛУЖИВАНИЯ К УМСТВЕННО ОТСТАЛЫХ ДЕТЕЙ


**А. Р. Мкртчян**

директор детского дома имени Мари Измирлян
кандидат педагогических наук, доцент

**Г. А. Баласанян**

специальный педагог Нор Харбердского
специализированного детского дома



В статье рассматривается проблема развития навыков самообслуживания у учающихся специальной /вспомогательной/ школы.


## SUMMARY

## RESEARCH AREAS OF WORK FOR DEVELOPMENT OF SELF-CARE SKILLS OF MENTAL RETARDED CHILDREN


**A. R. Mkrtchyan**

director of “Orphanage after Mari Izmirlyan”
associate professor, Candidate of Pedagogical Sciences,

**G .A. Balasanyan**

special pedagogue of special type orphanage of Nor Kharberd



In the article is discussed the issue of development of self care skills of mental retarded children in special school .